Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
հունիսի 9-ի N 627 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Դիլիջան քաղաքային բնակավայրում ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների կառուցապատողներին անհատական ծանուցման հետ կապված հարաբերությունները:

2. Դիլիջանի համայնքի ղեկավարը Դիլիջան քաղաքային բնակավայրում մինչև 2015 թվականի օգոստոսի 1-ը ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների վերաբերյալ տվյալները ստանալուց կամ ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքները հայտնաբերելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ինքնակամ կառուցապատում իրականացնողներին անհատապես ծանուցում է «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների մասին՝ համաձայն ձևի:

3. Սույն կարգով նախատեսված ծանուցումն իրականացվում է՝

1) ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքի կառուցապատողի հաշվառման վայրի հասցեով, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրի հասցեով՝ պատվիրված նամակով.

2) առաքմամբ՝ առձեռն հանձնմամբ՝ ծանուցողի իրավասու անձի միջոցով:

4. Սույն կարգով նախատեսված ծանուցումը համարվում է պատշաճ ձևով հանձնված, եթե այն առձեռն հանձնվել է ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքի կառուցապատողին՝ ստանալու մասին ստորագրությամբ կամ ուղարկվել պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև

____ _____ 20____թ.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

Տրվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի համայնքի Դիլիջան քաղաքային բնակավայրի վարչական տարածքում մինչև 2015 թվականի օգոստոսի 1-ը ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքի կառուցապատող

_____ -ին
(կառուցապատողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը)

NN ը/կ	Ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքի հասցեն, հասցեի բացակայության դեպքում՝ գտնվելու վայրի համառոտ նկարագրությունը	Ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքի համառոտ բնութագրումը (զբաղեցրած հողամասի և շինության մոտավոր մակերեսները, հարկայնությունը, ավարտվածության աստիճանը)

Սույնով հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ մինչև Դիլիջան քաղաքային բնակավայրի գլխավոր հատակագծի (ներառյալ կառուցապատման համար նախատեսվող տարածքների առանձնացումը) և գոտիավորման նախագծի (նախագծերի) հաստատումը՝ Դիլիջանի համայնքի Դիլիջան քաղաքային բնակավայրի վարչական տարածքում մինչև 2015 թվականի օգոստոսի 1-ը ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների օրինականացումն արգելվում է: Նշված ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների օրինականացումը կարող է իրականացվել Դիլիջան քաղաքային բնակավայրի գլխավոր հատակագծի (ներառյալ կառուցապատման համար նախատեսվող տարածքների առանձնացումը) և գոտիավորման նախագծի (նախագծերի) հաստատումից հետո՝ դրանցով սահմանված չափանիշներին համապատասխանության դեպքում:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

16_627